

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԶԱՅԵՐԵՆ, ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ
ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ

Գլոբալացումն ու միջազգայնացումը, բարեփոխվող սոցիալ-մշակութային իրավիճակը, միջազգային կրթական հանրության զարգացումն ու առաջընթացը, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումը պահանջում են կրթության ոլորտում նոր մոտեցումներ: ապահովելով կրթության համապատասխանությունը ժամանակակից միտումներին: Բազմալեզվության քաղաքականությունը արդիական է դարձնում տարբեր լեզուների ուսուցումը, ինչպես նաեւ տարբեր լեզուներով ֆոնային գիտելիքների տիրապետումը: Օտար լեզուների դերի ու նշանակության մեծացմանը զուգընթաց աճում է նաեւ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի դերն ու նշանակությունը: Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի առջեւ խնդիր է դրվում մշակել օտար լեզուների ուսուցման ու ուսումնառության ավելի ինտենսիվ մեթոդներ:

Վերջին տասնամյակում հատկապես մեծացել է անգլերեն լեզվի դերն ու նշանակությունը, ինչը հրատապ է դարձնում նրա դասավանդման նոր մեթոդների մշակումն ու կիրառումը: Այս տեսանկյունից հատկապես կարելի է անգլերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի դասավանդման խնդիրն ինչպես դպրոցում, այնպես էլ բուհում:

Մեր հետազոտությունը նվիրված է անգլերենի՝ բուհում որպես երկրորդ օտար լեզվի դասավանդմանն առնչվող մի քանի կարեւոր խնդիրների լուսաբանմանը, դիտարկելով անգլերենը որպես երրորդ լեզու՝ հայերենից (ելակետային) եւ գերմաներենից հետո: Այս համատեքստում անգլերենը կրում է վերոնշյալ լեզուների երկակի ազդեցություն՝ դրական (*տրանսպոզիցիա*) եւ բացասական (*ինտերֆերենցիա*): Այդ ազդեցությունները բացահայտելու նպատակով մենք ուսումնասիրել ենք երեք լեզուներում գոյականի առկայացման քերականական կարգի հիմնական դրսեւորումները, եւ հանգել այն եզրակացության, որ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուները այս դաշտում եւս ունեն շատ ընդհանրություններ՝ միաժամանակ ի հայտ բերելով նաեւ էական տարբերություններ:

Ինչպես հայերենում, այնպես էլ գերմաներենում եւ անգլերենում առկայացման կարգը գոյականի քերականական կարգերից է, որի արտահայտությունը սերտորեն կապված է հոգերի գործածության հետ:

Թեև հողի խնդիրը լեզվաբանության մեջ բազմաթիվ տարակարծություններ է հարուցում (մասնավորապես վիճելի է՝ արդյո՞ք այն բառ է թե՞ ձևույթ, առանձին խոսքի մաս է թե՞ ոչ)², սակայն պետք է փաստել, որ հողը բնորոշ է բազմաթիվ հնդեվրոպական լեզուների: Եվ՝ հայերենը, եւ՝ գերմաներենը, եւ՝ անգլերենն ունեն հողերի զարգացած համակարգ: Վերլուծական կառուցվածք ունեցող լեզուներում հողն ինքնուրույն միավոր է, որը կարող է բաժանվել իր գոյականից այլ բառերի միջոցով, հիմնականում ածականով (օր.՝ ռոմանա-գերմանական լեզուներ), իսկ համադրական կառուցվածք ունեցող լեզուներում հողը ձևույթ է եւ ածանցի նման միանում է անուն խոսքի մասերին (օր.՝ հայերեն):

Միաժամանակ հարկ է նշել, որ ի տարբերություն անգլերեն եւ հայերեն լեզուների, գերմաներենում հողն ունի հոլովի, թվի, սեռի արտահայտման որոշակի գործառույթ³:

Որոշյալ հող			
իգական սեռ	արական սեռ	չեզոք սեռ	հոգնակի թիվ
Nom. <i>die Frau</i> Gen. <i>der Frau</i> Dat. <i>der Frau</i> Akk. <i>die Frau</i>	<i>der Tisch</i> <i>des Tisches</i> <i>dem Tisch</i> <i>den Tisch</i>	<i>das Buch</i> <i>des Buches</i> <i>dem Buch</i> <i>das Buch</i>	<i>die Kinder</i> <i>der Kinder</i> <i>den Kindern</i> <i>die Kinder</i>
Անորոշ հող			
իգական սեռ	արական սեռ	չեզոք սեռ	հոգնակի թիվ
Nom. <i>eine Frau</i> Gen. <i>einer Frau</i> Dat. <i>einer Frau</i> Akk. <i>eine Frau</i>	<i>ein Tisch</i> <i>eines Tisches</i> <i>einem Tisch</i> <i>einen Tisch</i>	<i>ein Buch</i> <i>ein es Buches</i> <i>einem Buch</i> <i>ein Buch</i>	<i>Kinder</i> <i>Kinder</i> <i>Kindern</i> <i>Kinder</i>

Զանի որ այս գործառույթները բացակայում են հայերեն եւ անգլերեն լեզուներում, ապա որոշյալի եւ անորոշի իմաստը այս երկու լեզուներում ավելի որոշակի է համոզես գալիս:

Որոշյալ եւ անորոշ իմաստները հայերեն, անգլերեն եւ գերմաներեն լեզուներում մտնում են գոյականի քերականական բնութագրման մեջ եւ արտահայտվում են հողի այնպիսի ձևերով, ինչպիսին են *որոշյալ* եւ *անորոշ* հողերը, իսկ գոյականի հոգնակի թվի ձևերի, վերացական եւ նյութ ցույց տվող գոյականների դեպքում՝ համապատասխանաբար նաեւ *զոր* հողը:

Մեր ուսումնասիրած երեք լեզուներում էլ առկա է հետևյալ մոտեցումը.

² Ilyish B. A. *The Structure of Modern English*, Л., "Просвещение", 1971, էջ 49:

³ Տե՛ս՝ Հարությունյան Մ. *Գերմաներենի քերականության համառոտ ձեռնարկ*, Երևան, «Լաիրի», 1999:

Եթե առարկան ըստ խոսողի գնահատման հայտնի է խոսակցին, օգտագործվում է որոշիչ հոդը, եթե այն անհայտ է խոսակցին, օգտագործվում է անորոշ կամ զրո հոդը: Հոդի հարաբերակցական ձևերի իմաստները հատկապես որոշակի են արտահայտվում սովորական խոսակցական ոճին հատուկ օրինակով, ինչպես ասենք

Հայերեն	Գերմաներեն	Անգլերեն
Գիրքը կբերեն քեզ:	<i>Ich werde dir das Buch bringen.</i>	<i>I'll bring you the book.</i>
Քեզ /մի/ գիրք կբերեն:	<i>Ich werde dir ein Buch bringen.</i>	<i>I'll bring you a book.</i>

Սա հոդի այն գործածությունն է, որը նվազագույնս է շփոթություն առաջացնում օտար լեզու սովորողների մոտ, քանի որ կարելի է ասել, որ կա գրեթե հարյուր տոկոսանոց համապատասխանություն կիրառության մեջ, հետևաբար եւ հոդի հարաբերակից ձևերի գործածությունը օտար լեզվում գիտակցվում է նույնքան բնականոն ձևով, որքան մայրենի լեզվում: Այդ պատճառով անգլերենի եւ գերմաներենի հոդի գործածության հիմնական դեպքերի յուրացումը դժվարություն չի ներկայացնում հայերի համար:

Գերմաներենում եւ անգլերենում առանձնանում են երեք տիպի հոդ՝ *որոշյալ, անորոշ, զրո*, իսկ հայերենում՝ չորս՝ *դերանվանական /ս, դ, ն/, որոշիչ, անորոշ, զրո*⁴:

Հայերենին հատուկ դերանվանական հոդերը (*ս, դ, ն*) բացակայում են անգլերենում եւ գերմաներենում, եւ նրանց արտահայտած իմաստներն այս լեզուներում արտահայտվում են համապատասխանաբար՝ ստացական, ցուցական եւ անձնական դերանունների միջոցով⁵:

Հայերենում *ս, դ* հոդերը ունեն 3 տարբեր իմաստ եւ համապատասխանաբար օգտագործվում են 3 տարբեր դերանունների գործառնությով⁶: Դրանք կարող են արտահայտել.

1. ստացականություն (հայերենում ստացական հոդ, անգլերենում եւ գերմաներենում՝ ստացական դերանուն՝ հմմտ.՝ քույր*ս, my*sister, *meine* Schwester):

2. ցուցականություն (գիշեր*ս*, օրեր*ս*, վերջեր*ս*):

Անգլերենը եւ գերմաներենը այս դերում օգտագործում են ցուցական դերանուն:

this night, *these* days /անգլ/, *diese* Tage, *diese* Nacht / գերմ/

3. դիմորոշ հոդ (ցույց է տալիս դեմք)՝ մենք բոլոր*ս*, դուք բոլոր*դ*:

⁴ Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու . Ձեւաբանություն*, Երևան, 1988, էջ 90:

⁵ Գրաբարյան Մ, Դ, Ե հոդերն առաջանում են *այս, այդ, այն* ցուցական դերանուններից եւ շփման եզրեր ունեն այդ դերանունների իմաստային ու կիրառական առանձնահատկությունների հետ: Որոշելով, որոշյալ դարձնելով առարկան՝ գրաբարի հոդերը միաժամանակ նշում են, թե տվյալ առարկան ի՞նչ տարածական հարաբերություն ունի առաջին, երկրորդ, երրորդ դեմքերի հետ, ըստ որում Ս հոդը ցույց է տալիս, որ առարկան առաջին դեմքի մոտ է, կամ մտածվում է այդպիսին, Դ հոդը՝ երկրորդ, Ե հոդը՝ երրորդ: (տես՝ Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու . Ձեւաբանություն*, Երևան, 1988, էջ 90):

⁶ Տես՝ նույնը, էջ 90:

Անգլերենը եւ գերմաներենը այս դերում օգտագործում են որոշյալ դերանուն.

they all, wir alle

Ստացական իմաստով դերանվանական հոգը հայերենում կանոնավորապես օգտագործվում է մի խումբ գոյականների հետ, որոնց թվին են պատկանում ազգակցություն, մարմնի մասեր, արդուզարդ, հագուստ ցույց տվող բառերը⁷: Դասավանդման տեսակետից այս կողմը նույնպես դժվարություն չի ներկայացնում, քանի որ անգլերենն ու գերմաներենն էլ այս դեպքում կանոնավորապես դիմում են ստացական դերանվան գործածությանը՝

my foot, my coat, my ring, mein Fuss, mein Mantel :

Ձուգադրելով հայերենի, գերմաներենի եւ անգլերենի մյուս 3 հոգերը, որոնց միջոցով արտահայտվում է որոշյալի եւ անորոշի քերականական կարգը, եւ հաշվի առնելով նրանց գործառության տարբերությունը կօգնի ճիշտ կերպով կազմակերպելու գործնական աշխատանքները եւ հնարավորություն կտա ուսուցման պրոցեսում նախատեսելու եւ կանխելու սովորողների սխալները: Անդրադառնա՞նք յուրաքանչյուր հոդին առանձին:

Որոշյալ հոդ : Որոշյալ հոգը ունի անհատականացնող իմաստ: Այդ նշանակում է, որ տվյալ առարկան առանձնացվում է իր նման այլ առարկաներից եւ որոշակի է իր սահմանների մեջ: Այսպիսով, այս հոգը բնութագրում է առարկան որպես հայտնի, կոնկրետ, որոշյալ, որպես միանման առարկաների ողջ դասից առանձնացվող առարկա: Հետեւաբար, գոյականի որոշյալությունը պայմանավորված է նրանով, որ այդ գոյականով արտահայտված առարկան խոսքի սահմաններում մտածվում, ընկալվում, իմաստավորվում է որպես եզակի առարկա, որպես միակը: Այդ եզրակացությունը կարող է տարբեր լինել՝ կախված մի շարք հանգամանքներից, որոնց մասին մենք կխոսենք: Ինչ վերաբերում է որոշյալ հոդի գործառությանը, ապա դրանք երկուսն են.

1. անհատականացնող (մասնավորեցնող եւ առանձնացնող) գործառույթ, որը որոշյալ իմաստ է արտահայտում
2. ընդհանրացնող, որը այլեւս որոշյալության հետ չի կապվում:

Այսպիսով, գոյականի որոշյալությունը կապված է որոշյալ հոդի անհատականացնող գործառույթի հետ: Որոշիչ հոդի այս երկու հիմնական գործառույթները ընդհանուր են ինչպես հայերենի եւ գերմաներենի, այնպես էլ անգլերենի համար, որից եւ բխում են սրանց օգտագործման ընդհանրությունները զուգորդվող լեզուներում: Սակայն, պետք է նշել, որ կան զգալի տարբերություններ որոշյալ հոդի գործառության իմաստով:

⁷ Անգլերենի առանձնահատկությունն այն է, որ ազգակցություն ցույց տվող 2 բառերի հետ, երբ նրանք վերաբերում են 1-ին դեպքին, *my* ստացական դերանունը սովորաբար չի գործածվում՝ (*My*) *Father, Mother*, մինչդեռ հայերենում եւ գերմաներենում ազգակցություն ցույց տվող բոլոր բառերի հետ պարտադիր է ստացական դերանվան գործածությունը՝ *հայրս/ իմ մայրը, մայրս/ իմ մայրը, զոքանչս, mein Vater, meine Mutter, meine Schwiegermutter* եւ այլն:

Եւ չենք այն հիմնական պայմանները, երբ գոյականը ընթերցվում է որպէս որոշյալ.

1. Մատնանշում, որի հետեւանքով գոյականը մտածվում է եւ ընկալվում որպէս որոշյալ: Մատնանշումը կարող է լինել ուղղակի (իրականացվում է ցուցական դերանունների գործածությամբ) եւ անուղղակի (կատարվում է 2-րդական մախաղասութիւնների օգնությամբ):

Օր՝ այդ մարդը, *this man, dieser Mann* կամ՝

Գիրքը, որ դու երեկ ինձ տվեցիր, *հետաքրքիր էր:*

Das Buch, das du mir gestern gegeben hast, war interessant.

The book you gave me yesterday, was interesting.

2. Գոյականը կարող է որոշյալ լինել շնորհիվ այն բանի, որ սրանով անվանվող առարկան աշխարհում միակն է, օր.՝ արեւ, լուսին, երկիր: Այս դեպքում որոշյալ հոդի գործածության համապատասխանություն կա բոլոր երեք լեզուներում:

Երկիրը պտտվում է արեւի շուրջը: *Die Erde dreht sich um die Sonne. The Earth rotates around the Sun.*

3. Երբ խոսքի մէջ կա արդեն մի անգամ հիշատակվածի վկայակոչում.

Սա գիրք է: *Das ist ein Buch.*

This is a book.

Գիրքը սեղանի վրա է: *Das Buch ist auf dem Tisch. The book is on the table.*

Որոշյալ հոդի ընդհանրացնող գործառնութի դեպքում մի առանձին վերցրած գոյականի միջոցով ընդհանրացվում է նրա ամբողջ դասը:

Շունը հավատարիմ է: *Der Hund ist treu. The dog is faithful.*

Հայերենում դերանվան առկայությունը գրեթէ միշտ հանգեցնում է որոշիչ հոդի գործածության, որն ավելանում է գոյականի վրա՝ վերջից: Հայերենի համար տիպային են այնպիսի կառուցվածքներ, ինչպիսին են ցուցական դերանուն + գոյական + որոշիչ հոդ.

օր.՝ *այս գիրքը*

Մինչդեռ գերմաներենում եւ անգլերենում, ինչպէս եւ եվրոպական մյուս լեզուներում ցուցական դերանունը փոխարինում է հոդին, այսինքն միաժամանակ դերանունը եւ հոդը իրար հետ գործածվել չեն կարող: Այս լեզուների համար տիպային են այնպիսի կառուցվածքներ, ինչպիսիք են ցուցական դերանուն/ հոդ + գոյական.

օր.՝ *Das Buch / dieses Buch.*

The book / this book.

Սա բացատրվում է նրանով, որ եվրոպական լեզուներում հոդը եւ ցուցական դերանունը դրվում են գոյականից առաջ, եւ ցուցական դերանուն գործածելիս հոդն ավելորդ է: Իսկ հայերենում հոդը ետադաս է, եւ ցուցական դերանվան հետ իրար չեն խանգարում:

Անորոշ հոդ: Անորոշ հոդը բնութագրում է գոյականով արտահայտված առարկան որպէս տվյալ դասի մէջ մտնող բազմաթիվ նույնանման առարկաներից մեկը:

Միշտ չէ, որ անորոշ հոդը գոյություն է ունեցել հայերենում⁸: Ժամանակակից հայերենում դրվելով գոյականի վրա, այն ցույց է տալիս, որ գոյականով արտահայտված գաղափարը նոր է, եւ մինչ այդ արտահայտված չի եղել: Անորոշ հոդը ունի երկու գործառույթ՝

1. Ներմուծող գործառույթ (ներմուծող անորոշ հոդ)
2. Ընդհանրացնող գործառույթ (բացարձակ անորոշ հոդ)

Ներմուծող գործառույթը ընդհանուր է զուգադրվող լեզուների համար: Երեք լեզուներում էլ այն օգտագործվում է, երբ խոսքի մեջ է ներմուծվում նոր հասկացություն:

Ներմուծող անորոշ հոդը առանձնացնում է առարկան իր նման բազմաթիվ առարկաներից, ինչի շնորհիվ առարկան հայտնվում է մեր ուշադրության կենտրոնում, եւ դա ստիպում է մեզ սպասել հետագա տեղեկությունների՝ այդ առանձնացված առարկայի մասին.

Մի ուսանող մերս մտավ. *A student came in.* *Ein Student trat ein.*

Բացարձակ անորոշ հոդը գոյական առարկան ներկայացնում է որպես տվյալ դասի առարկաների ներկայացուցիչ: Այս դեպքում առանձնացում տեղի չի ունենում:

Նա նման էր մի գեղեցիկ ծաղկի: *Sie war wie eine schöne Blume.* *She was like a beautiful flower.*

Որոշյալ եւ անորոշ հոդերի գործածությունը սերտորեն կապված է նախադասության իմաստային տրոհման հետ. որոշյալ առումով գործածված գոյականը հանդես է գալիս որպես խոսքի ելակետը, իսկ անորոշ առումով գոյականը՝ որպես այն նորությունը, որ հաղորդվում է:

Նամակը մի կին բերեց: *Կինը սպիտակ գլխարկով էր:*

Eine Frau brachte den Brief. *Die Frau hatte einen weißen Hut.*

A woman brought the letter. *The woman was in a white hat.*

Հոդերի, եւ մասնավորապես, անորոշ հոդի գործածության որոշ տարբերություններ են նկատվում դարձյալ ստորոգելիական վերադիր գոյականի հետ՝ հայերենում, գերմաներենում եւ անգլերենում: Հայերենում մենք կարող ենք ասել. *Նա (մի) ուսանող է:* Անորոշ հոդի գործածության դեպքում չարադրանքը որոշ չափով անավարտ է լինում, առաջանում է հետագա

⁸ Անորոշ հոդի գոյությունը չէր ընդունվում հայերենում: Այն նույնացվում էր մի թվականի հետ: Սակայն հայերենի հոդերի հատուկ ուսումնասիրությունը բերում է մեզ այն համոզման, որ հայերենն ունի անորոշ հոդ, միշտ չէ, որ «մի»-ն թվական է լինում: Ուսումնասիրությանը բացահայտվել է, որ արդի հայերենում կան բազմաթիվ դեպքեր, երբ «մի» բառը օգտագործվում է վերացական գոյականների հետ, որոնք անհաշվելի գոյականներ են եւ հետեւաբար քանակական որոշիչ ունենալ չեն կարող: Ուրեմն «մի» բառը թվական չէ: *Օր՝ շյուների վրա ընկած էր մի կին: Սեռնում էր անմիտ մի ժպիտ դնե՞րին: Չարե՞նց:* տես՝ Յ. Туманян, Армянски в современном армянском языке, М. - Е., 1963:

տեղեկությունների սպասում: Այսինքն, *ճա մի ուսանող է կառույցում առկա է սպասողական վիճակ ու որեւէ հետագա շարադրանքի ակնկալիք:*

Գերմաներենում եւ անգլերենում որոշիչ հոդն է առաջացնում այդ սպասողական վիճակը (քանի որ վերադիրը միշտ ունի *ա*): Այս տարբերությունը նույնպես կարող է գործածման սխալների հանգեցնել, երբ ինտերֆերենցիայի ազդեցությամբ սովորողը *das ist das Buch, das du mir gestern gegeben hast/It is the book that you gave me yesterday*, ասելու փոխարեն ասում է՝ *das ist ein Buch, das du mir gestern gegeben hast/It is a book that you gave me yesterday*⁹.

Հայերենը, գերմաներենը եւ անգլերենը անորոշ հոդի գործածության ընդհանրություններ են հանդես բերում որոշ կայուն բառակապակցությունների մեջ:

մի քանի, մի քիչ, մի փոքր, ein bisschen, ein wenig, a little, a few եւ այլն¹⁰:

Թվականի հետ անորոշ հոդը հայերեն եւ անգլերեն լեզուներում ցույց է տալիս մոտավոր քանակ: *There are a 50 students in our group. Մի / մոտ 50 ուսանող կա մեր խմբում:*

There are 50 students in our group. 50 ուսանող կա մեր խմբում: /հաստատ/

Զրո հոդ: Գոյականից առաջ հոդի իմաստավորված բացակայությունը լեզվաբանության մեջ ստացել է *զրո հոդ* անվանումը: Զրո հոդը հատուկ է ինչպես հայերենին, այնպես էլ գերմաներենին եւ անգլերենին եւ ունի գործառնության իր օրինաչափությունները:

Զրո հոդով գործածված գոյականը տարբերվում է երկուսից էլ նրանով, որ այդ գոյականը արտահայտում է բառ-իմաստը ամենաընդհանուր եւ վերացական ձեւով, առանց որեւէ կոնկրետացման եւ սահմանափակման: Զրո հոդի գործառնության առումով եւս հայերենը, անգլերենը եւ գերմաներենը հանդես են բերում որոշակի տարբերություններ:

Սեր դիտարկած լեզուներում գոյականը զրո հոդով է գործածվում.

ա/ երբ նրան նախորդում է դերանուն, կամ չհամաձայնեցված որոշիչ (գերմաներենում եւ անգլերենում), բ/ եթե գոյականին նախորդում է քանակական թվական, գ/ հոգնակի թվում, երբ եզակի թվում գոյականը հանդես է գալիս անորոշ հոդով, դ/ անձնանուններից, քաղաքների, որոշ երկրների անուններից առաջ, ե/դիմելիս եւ կոչումը նշելիս, զ/ուսումնական առարկաները թվարկելիս եւ այլն:

Տարբեր լեզուներում, որոնց հոդ ունեն, բաղադրյալ անվանական ստորոգյալի կազմի մեջ մտնող ստորոգելիական վերադիր գոյականը սովորա-

⁹ Սա երեք լեզուներում էլ իր արտահայտությունն է գտնում հնչեղանգի մեջ (արտասանվում է վերընթաց տոնով):

¹⁰ *Քիչ-մի քիչ, little- a little, little- a little* հերթագայության մեջ տեղի է ունենում բառիմաստի փոփոխություն:

բար օգտագործվում է առանց որոշյալ հոդի: Ինչ վերաբերվում է անորոշ եւ գրո հոդին, նրանք վերադրի հետ տարբեր ձեւով են օգտագործվում տարբեր լեզուներում:

Հայերենում եւ գերմաներենում վերադիր գոյականը օգտագործվում է գրո հոդով, մինչդեռ անգլերենում՝ անորոշ հոդով:

Նա ուսանող է:

Er ist Student:

He is a student.

Հայերենում եւ գերմաներենում ստորոգելիական վերադիր-գոյականի գրո հոդով գործածվելը բացատրվում է նրանով, որ գոյականը կորցնում է իր առարկայական բնույթը, ձեռք է բերում ածականին բնորոշ գծեր, ցույց է տալիս հատկանիշ: Անգլերենն այս դեպքում դիմում է անորոշ հոդին, որի շնորհիվ վերադիրը բնութագրում է առարկան՝ սուբյեկտը, որպես տվյալ դասի առարկաներից մեկը:

Անգլերենում եւս, երբ վերադիր գոյականը վերացական բնույթ է ստանում, այսինքն՝ նկարագրում է ենթակայի վիճակը, զբաղմունքը, պաշտոնը, օգտագործվում է գրո հոդը: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ պաշտոնը, դիրքը բացառիկ է, միակը (Օր՝. *He is Rector of the Yerevan Northern Nniversity*): Նման դեպքում հայերենն եւ գերմաներենը դիմում են որոշիչ հոդի գործածությանը՝ *Նա Երեւանի Հյուսիսային համալսարանի ռեկտորն է: Er ist der Rektor der Yerevaner Nordlichen Universität.*

Այսպիսով, ընդհանրացնելով վերը ասվածը, կարելի է փաստել, որ դիտարկված երեք լեզուներն էլ՝ հայերենը, անգլերենը եւ գերմաներենը, ունեն հոդի զարգացած համակարգ: Եվ չնայած առկայացման կարգի որոշ ընդհանրություններին, համապատասխան հոդերի գործածությունը միայն մասնակիորեն է համընկնում երեք լեզուներում, քանի որ նրանց կոնկրետ գործածությունը կապված է պատմականորեն առաջացած օրինաչափությունների հետ: Այդ օրինաչափություններն անհատական բնույթ են կրում յուրաքանչյուր լեզվի համար եւ դրանց ճիշտ ընկալումն ու մեկնաբանությունը կարելու է օտար լեզվի դասավանդման գործընթացում: Հետեւաբար, օտար լեզվի դասավանդման խնդիրներից մեկը երկրորդ օտար լեզվի լեզվական միավորների ուսուցման համապատասխան մեթոդիկա եւ առավել արդյունավետ վարժությունների համակարգ մշակելն է՝ հաշվի առնելով միջլեզվային բացասական ներթափանցումը (ինտերֆերենցիա) եւ նախկինում ձեռք բերած դրական փորձի փոխադրումը (տրանսպոզիցիա):

Գրականության ցանկ

1. Ասատրյան Ս., *Ժամանակակից հայոց լեզու*. Չեաբանություն, Երեւան, 1988
2. Հարությունյան Ս., *Գերմաներենի քերականության համառոտ ձեռնարկ*, Երեւան, «Նաիրի», 1999
3. Туманян Э., *Артикли в современном армянском языке*, М. -Е., 1963
4. Ilyish B. A. *The Structure of Modern English*, "Просвещение", Лен., 1971
5. Klein W. *Second Language Acquisition*. Cambridge, Cambridge University Press 1994
6. Richards J, Platt J., Weber H. *Longman Dictionary of Applied Linguistics* (LDAL) L., 1995